ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Ստեփանյանի «Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները», ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Ստեփանյանի ատենախոսությունը նվիրված է պատերազմի մասնակիցների սթրեսային փորձառություններին տրվող քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությանը Հայաստանում: Ատենախոսությունը համատեղում է տեսական և էմպիրիկ բաղադրիչներ՝ ընդգրկելով սթրեսի բնույթը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումները (ՀՏՍԽ), սթրեսակայունությունը և հետտրավմատիկ անձնային աճը (ՀՏԱ), ինչպես նաև պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վերլուծությունը: Թեմայի ընտրությունը արդիական է, քանի որ վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի բնակչությունը, հատկապես երիտասարդ տղամարդիկ, ենթարկվել են բազմակի ռազմական փորձառությունների՝ Արցախյան առաջին պատերազմից մինչև 2021-2023թթ. մարտական գործողություններ:

Ատենախոսության թեման բնորոշվում է արդիականությամբ: Հետազոտությունը նպատակ է հետապնդել ուսումնասիրել՝ վերհանել ու գնահատել պատերազմների մասնակիցների հոգեբանական վիճակը, աշխատանքի արդյունքները ուղղորդել սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրերի մշակմանը, սթրեսակայունության բարձրացմանը և հետտրավմատիկ անձնային աճի խթանմանը: Ատենախոսությունը հիմնված է սթրեսի, քոփինգի և հետտրավմատիկ անձնային աճի դասական և ժամանակակից տեսությունների վրա՝ ներառելով Սելյեի կենսաբանական սթրեսի տեսությունը, Հոբֆոլի ռեսուրսների պահպանման տեսությունը և Կիտան-Սմիկի հայեցակարգը: Ատենախոսության տեսական մասը ամփոփում է արևմտյան և ռուսական

հոգեբանության հեղինակների հետազոտություններ, ինչն ապահովում է հետազոտության համար համապարփակ տեսական հիմքը: Կիրառվել են թե՛ քանակական, թե՛ որակական մեթոդներ՝ ներառելով հարցաթերթիկներ, թեստավորում և հարցազրույցներ: Այս մոտեցումը ապահովում է տվյալների բազմակողմանի հավաքում և համեմատական վերլուծություն, ինչպես նաև թույլ է տալիս բացահայտել սթրեսային իրավիճակներում անհատական և սոցիալական գործոնների փոխազդեցությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը մանրամասն ներկայացնում է փորձարարական արդյունքները, համեմատական վերլուծությունը, և համահարաբերակցային վերլուծությունը: Արդյունքները վերհանում են քոփինգ ռազմավարությունների տարբերությունը տարբեր ռազմական հակամարտությունների մասնակիցների միջև, ինչպես նաև սթրեսակայունության և արժեքային կողմնորոշումների դերը ռազմավարությունների ընտրության մեջ: Արդյունքները կիրառելի են հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար և կարող են նպաստել կրթական ծրագրերի իրագործման և պետական քաղաքականության մշակման գործընթացներում: Ատենախոսի հեղինակը վերհանել է այն մեխանիզմները, թե ինչպես կարելի է ուժեղացնել պատերազմի մասնակիցների հոգեբանական դիմադրողականությունը և բարելավել սոցիալական աջակցության համակարգերը: Սա, որոշակիորեն նոր մոտեցում է հայկական սոցիալ-մշակութային համատեքստում պատերազի մասնակիցների միջև համեմատական վերլուծության և քոփինգ ռազմավարությունների ներկայացման տեսանկյունից, ինչպես նաև արժեքային կողմնորոշումների միջնորդավորող դերի և ՀՏԱ-ի կապի ներկայացումը քոփինգ ռազմավարությունների հետ: Հետազոտության մեթոդական հագեցվածությունը և բազմազանությունը հատուկ ուշադրության է արժանի: Ատենախոսության մեջ կիրառվել է բազմակողմանի փորձագիտական գործիքակազմ՝ Միսիսիպյան սանդղակ ՀՏՍԽ-ի գնահատման համար, ՀՏԱՀ հարցարանը՝ հետտրավմատիկ անձնային աճի վերլուծության համար, Ռ. Լազարուսի «Քոփինգ ռազմավարություն» մեթոդիկան, Շվարցի արժեքային կողմնորոշումների հարցարանը և Վ.Վ. Բոյկոյի սթրեսակայունության մեթոդիկան, որոնց համատեղ կիրառությունը ապահովել է համապարփակ և խորքային պատկեր պատերազմի մասնակիցների

հոգեբանական վիճակի և հարմարվողական ռազմավարությունների վերաբերյալ: Հատկանշական է, որ բոլոր մեթոդիկաները ճիշտ ընտրված են հետազոտության օբյեկտի և առարկայի համատեքստում, ինչը բարձրացնում է հետազոտության վստահելիությունն ու հուսալիությունը: Ատենախոսության ընտրված փորձարարական ընտրանքը՝ 400 անձ, ներառելով թե պատերազմի մասնակիցների, թե չմասնակցած զինծառայողների խմբերը, թույլ է տալիս իրականացնել համեմատական վերլուծություն և գնահատել քոփինգ ռազմավարությունների տարբերությունը տարբեր ենթախմբերում: Ուշադրության է արժանի նաև տվյալների հավաքագրման կազմակերպումը՝ համատեղելով հարցաթերթիկները, հարցազրույցները և օնլայն տարբերակները, ինչը ապահովում է վստահելի և բազմակողմանի տվյալներ: Հետազոտության տվյալների վերլուծության խորը մակարդակը ընդգծում է աշխատանքի գիտական նորույթը: Շապիրո-Ուիլքի թեստի, MANCOVA-ի և համահարաբերակցային վերլուծությունների կիրառությունը թույլ է տալիս ոչ միայն որոշել տարբեր խմբերի հոգեբանական ադապտացիայի և ՀՏՍԽ մակարդակը, այլև բացահայտել արժեքային կողմնորոշումների, սթրեսակայունության և հետտրավմատիկ աճի միջև փոխկապակցված հարաբերությունները: Արդյունքները ցույց են տալիս, որ պատերազմի մասնակիցները ցուցաբերում են ամբողջական, ինտեգրալ հոգեբանական աճ, մեծ անձնական ուժ, կյանքի արժեքի գիտակցում և սոցիալական հարաբերությունների բարելավման ձգտում: Նման բարելավող հոգեբանական փոփոխությունները վկայում են ոչ միայն անհատական հարմարվողականության մասին, այլև ընդգծում են հետտրավմատիկ աճի պոտենցիալը՝ որպես հոգեբանական վերականգնման կարևոր աղբյուր: Հետազոտության գործնական նշանակությունը ևս ակնհայտ է: Ստացված տվյալները կարող են ծառայել հոգեբանական աջակցության ծրագրերի մշակման, կրթական նախաձեռնությունների և պետական քաղաքականության զարգացման հիմք՝ ուղղված պատերազմական փորձառություններ ունեցող անձանց հարմարվողականության և սթրեսի արդյունավետ կառավարման ապահովմանը: Նպաստում է նաև հասարակության և զինվորների միջև հոգեբանական կապերի ամրապնդմանը, ինչը կարևոր է սոցիալական կայունության համար:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հրատարակված գիտական հոդվածներում: Այնուամենայնիվ ներկայացված ատենախոսության մեջ առկա են որոշ նկատառումներ, որոնք մեկնաբանության կարիք ունեն:

Եվ այսպես՝

1. Ատենախոսական աշխատանքում նշված է հարցազրույցի մեթոդի կիրառման մասին, սակայն դրա արդյունքների վերաբերյալ վերլուծություններ ներկայացված չեն:

2. Ատենախոսության մեջ համեմատության առանցքը բավական հստակ է սահմանված՝ պատերազմին մասնակցած և չմասնակցած անձանց քոփինգ ռազմավարությունների տարբերության դիտարկման միջոցով: Միևնույն ժամանակ, քննարկումների վերլուծական արժեքը կարող էր էապես բարձրանալ, եթե մասնակցության փաստը դիտարկվեր ոչ միայն որպես փոփոխական, այլև ներառվեին դրա որակական պարամետրերը: Մասնավորապես, նպատակահարմար կլիներ տարբերակել պատերազմի մասնակցության բնույթը (կամավոր, զորակոչով կամ հարկադիր), տեղակայումը (առաջնագիծ, թիկունք, հատուկ կամ դիվերսիոն առաջադրանքներ), ինչպես նաև հաշվի առնել մասնակիցների հոգեկան վիճակի նախապատմությունն ու տրավմատիկ փորձառության խորությունը: Նշված գործոնների ընդգրկումը կարող էր նպաստել սթրեսին արձագանքման և քոփինգ ռազմավարությունների ձևավորման ավելի խորքային և համակողմանի մեկնաբանությանը:

3. Ատենախոսը ստացել է տեղեկատվական և մեթոդաբանորեն հիմնավորված տվյալներ, սակայն դրանց ներկայացումը միշտ չէ, որ ապահովում է բավարար տեսանելիություն: Ցանկալի կլիներ, որ արդյունքները ներկայացվեին գծապատկերների միջոցով, ինչը կբարձրացներ նյութի ընկալելիությունը:

4. Աշխատանքում բացակայում է երկարատև դինամիկայի ուսումնասիրությունը. քոփինգ ռազմավարությունները դիտարկվում են մեկ ժամանակային կտրվածքով, առանց

հաշվի առնելու դրանց փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ հետպատերազմական ադապտացիայի տարբեր փուլերում:

5. Ատենախոսն անդրադարձ չի կատարել գենդերային տարբերություններին, թեև տարբեր սեռերի ներկայացուցիչների քոփինգ ռազմավարությունների գենդերային առանձնահատկությունների վերլուծությունն ավելի կհարստացներ աշխատանքը:

Եզրակացություն

Լիլիթ Ստեփանյանի «Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները», ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն, գիտական պատշաճ, գրագետ մակարդակով աշխատանք է: Այն իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Լիլիթ Ստեփանյանը «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյան

Մասնագետի (Նաիրա Հակոբյանի) ստորագրության իսկությունը

հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

գիտքարտուղար՝ Մ. Մարգսյան